Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	ՏՀՏ գործիքները 4-5-րդ դասարանում անգլերենի ուսուցման մեջ: Հետազոտական հարց՝ Որքանո՞վ է ՏՀՏ Kahoot գործիքը անգլերենի ածական թեման 4-5-րդ դասարաններում դասավանդելը դարձնում ավելի հետաքրքիր և արդիական:
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Լուսինե Հովհաննեսի Դալլաքյան Մանկավարժ Անգլերեն 4-9
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N4 հիմնական դպրոց 022442596 nhachn4@schools.am norhachn4.schoolsite.am

Բովանդակություն

Բովանդակություն
……..
Հետազոտական
աշխատանք…… 1
Տիտղոսաթերթ……
…. .1
Բովանդակություն……
….. .2
Ներածություն……
.. 3
Պարագրաֆներ/մասեր……
…... 4
Գրականության
ակնարկ…… 4
Օգտագործված
մեթոդները…….. 15
Եզրակացություններ,
առաջարկություններ…… 16
Օգտագործված գրականության
ցանկ…… . 17
Հավելված 1……
…18
Հավելված2……
18

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Թվային և մեդիա կարողունակության զարգացում: Որքանո՞վ է SRS Kahoot գործիքը անգլերենի ածական թեման 4-5-րդ դասարաններում դասավանդելը դարձնում ավելի հետաքրքիր և արդիական:
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Մեր օրերում շատ են փոխվել սովորողների հետաքրքրությունները: Ուսուցիչներիս համար ավելի դժվար է դարձել սովորողներին ինտեգրել դասին: Ուստի պետք է մշտապես ուսումնասիրել նրանց հետքրքրությունների շրջանակը և գտնել ու կիրառել նոր մեթոդներ դասն ավելի հետաքրքիր ու արդիական դարձնելու համար:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Թվային և մեդիա կարողունակության
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ Առարկայի դասավանդման մեթոդիկա Գնահատում

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Դասը ուսումնական աշխատանքի կազմակերպման ձև է, երբ դասընթացներն իրականացվում են սովորողների որոշակի կազմի՝ դասարանի հետ, հստակ դասացուցակով՝ օգտագործելով սովորողների կոլեկտիվ ու անհատական աշխատանքը՝ կիրառելով ուսուցման տարբեր մեթոդներ: Ավելի լայն իմաստով՝ դասը սովորողի կողմից նախկինում անծանոթ դասնյութի մասին պատկերացում կազմելուն ուղղված գործընթացն է: Ելնելով դասի ընթացքում կիրառվող մեթոդներից, դասի կազմակերպման ձևերից, դասի բովանդակությունից, անցկացման եղանակից, ուսուցման նպատակից, ուսուցման գործընթացի հիմնական փուլերից դասերը կարող են տեսակավորվել տարբեր կերպ: Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Այդ ձևում ներդրված են

	կրթական-դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր: Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ: Ժամանակակից դասի դիդակտիկ պահանջները. • դիդակտիկ նպատակի հստակ ձևակերպում • դասի նպատակներին և ուսումնական ծրագրին համապատասխան դասի լավօրինակ բովանդակության սահմանում՝ հաշվի առնելով սովորողների պատրաստվածության և պատրաստվելու մակարդակները • սովորողների կողմից գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման կանխատեսում ինչպես դասի, այնպես էլ դասի տարբեր փուլերի ընթացքում • դասի յուրաքանչյուր փուլի վրա լավագույնս ազդող դասավանդման

	առավել ռացիոնալ մեթոդների, հնարների և միջոցների ընտրություն դասապգործընթացում սովորողների առավելագույն ինքնուրույնության և դասի ժամանակ անհատական և խմբային աշխատանքների տարբեր ձևերի հետ համադրված ճանաչողական ակտիվության ապահովում դասի ժամանակ բոլոր դիդակտիկ սկզբունքների իրագործում սովորողների ուսումնառության լավագույն պայմանների ստեղծում: Դասավանդման մեթոդներն ըստ ուսումնառության գործընթացում սովորողների դերի. **Պասիվ.** այստեղ սովորողները հանդիսանում են ուսումնառության «օբյեկտ», որը պետք է յուրացնի և վերարտադրի գիտելիքների աղբյուրի՝ դասավանդողի փոխանցած նյութը: Հիմնական մեթոդներն են դասախոսությունը, ընթերցանությունը և հարցումը: **Ակտիվ**. Այստեղ սովորողները հանդիսանում են ուսումնառության «սուբյեկտ» և կատարում են ստեղծագործ առաջադրանքներ, դասավանդողի հետ երկխոսության մեջ են մտնում: Հիմնական մեթոդներն են ստեղծագործ առաջադրանքները, հարցերը

ուղղված սովորողից դասավանդողին և դասավանդողից՝ սովորողին:

Փոխներգործուն. թույլ են տալիս ուսումնական գործընթացի մասնակիցներին, ներառյալ դասավանդողին փոխազդել միմյանց վրա: Այս մեթոդները առավել համապատասխանում են անձի անհատականության բացահայտմանն ուղղված մոտեցումներին, քանի որ վերջիններս ենթադրում են համատեղ ուսուցում (խմբային, համագործակցային ուսուցում), ընդ որում և՛ սովորողները, և՛ դասավանդողը հանդիսանում են ուսումնական գործընթացի սուբյեկտներ: Դասավանդողը հաճախ ներկայանում է կրթական գործընթացի կազմակերպիչի, խմբի ղեկավարի, սովորողների նախաձեռնությունների համար անհրաժեշտ պայմանների ստեղծողի դերում:

ՏՀՏ գործիքները և արդի կրթությունը

Նոր տեխնոլոգիաների ներգրավումը մեր կյանքում ամբողջովին փոխել է այն աշխարհը, որում մենք ապրում ենք: Այս փոփոխությունների շարքում մենք գտնում ենք կրթական ոլորտում տեղի ունեցածները, որոնցում ներկայումս տարօրինակ է տեսնել մի դասարան, որում դրանք չեն օգտագործվում

	ուսուցում-ուսուցման գործընթացը բարելավելու համար: ՏՀՏ-ի սրընթաց զարգացումն արդի ժամանակաշրջանում բնականաբար նոր պահանջներ է դրել նաև կրթական համակարգերի առջև ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: ՏՀՏ-ը դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալմանը, բարձրացնել առաջադիմությունը [1]և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից ուսուցման, գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: Դրանք նպաստում են մանկավարժների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու ՏՀՏ հմտությունների զարգացմանը:ՏՀՏ-ը հնարավորություն են ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ

[1]

	բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռք բերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ: Ի վերջո ՏՀՏ-ը թույլ են տալիս դասվանդողին ու սովորողին հաղորդակցվել միևնույն միջավայրում և նույն «լեզվով»: ՏՀՏ-ն ունեն նորարարության զարգացումն արագացնելու, սովորողների գիտելիքները հարստացնելու ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց մոտիվացիան բարձրացնելու և ուսման մեջ արդյունավետ ներգրավելու ներուժ: Դրանք բարելավում և կատարելագործում են ուսումնական գործընթացը և օգնում դպրոցներին վերափոխել:Էլեկտրոնային ուսուցումը կրթական գործընթացի կազմակերպումն է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ:Էլեկտրոնային ուսուցումը կարող է շոշափելիորեն ավելացնել սովորողների գիտելիքները, որի միջոցով մասնակիցները գործնական փորձ ու գիտելիք են ստանում համացանցից: Էլեկտրոնային ուսուցումը սովորողներին նոր հմտություններ և որակավորում ստանալու, նոր ուղղություններով զարգանալու հնարավորություն է ընձեռնում:

	Ուսումնական գործընթացում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը մի քանի կարևոր կողմեր ունի, մասնավորապես. • տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է ստեղծագործական ու նորարարական մոտեցումների զարգացմանը, ինչը չափազանց կարևոր է հիմնախնդիրների վրա հիմնված կառուցողական դասարանային միջավայր ստեղծելու համար • ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է այնպիսի ակներևություններ ստեղծել, որոնք անհրաժեշտ են նոր հասկացություն, օբյեկտ և ընթացակարգ ներմուծելիս[2] • ՏՀՏ-ի գործածությունը կարող է առավել արդյունավետ ու ինտենսիվորեն նպաստել ազգային ուսումնական պլանով նախատեսված կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Այդպիսիք են, օրինակ՝ թե՛ տեսողական, թե՛ քանակական օրինաչափությունների հայտնաբերման կարողությունը օբյեկտների չափերը գտնելու և գնահատելու կարողությունը, տեղեկատվությունը վերլուծելու և մեկ ձևաչափը մյուսով փոխարինելու կարողությունը տարածության ընկալումը, համագործակցության կարողություններն ու հմտությունները,

2

	աշխատանքային միջավայրի պատրաստումը և անհրաժեշտ միջոցներ ընտրելու կարողությունը: Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների գործածությունն ուսման գործընթացում նպաստում է սովորողների մոտիվացիայի աճին: Բացի նրանից, որ ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ: Արդյունքում, սովորողը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն է կարող փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: Իսկ այս ամենը համապատասխանում է ուսումնական գործընթացի նկատմամբ ժամանակակից, կառուցողական մոտեցմանը, որը նախատեսում է գիտելիքի հայթայթում և ստեղծում հենց սովորողի կողմից: Թվային տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված՝ վերջին տարիներին նշանակալի փոփոխություններ են տեղի ունեցել և շարունակում են տեղի ունենալ կրթության ոլորտում, ինչպես բովանդակության, այնպես էլ մատուցման ձևի մեջ ամբողջ աշխարհում: Գոյություն ունեն բազմաթիվ ՏՀՏ գործիքներ, որոնք կարող են օգտագործվել դասարանում ՝ ուսանողներին մոտիվացնելու և նրանց ուսումը

	բարելավելու համար: Սակայն ոչ այն պատճառով, որ բոլորն օգտագործում ենք, մենք լավ մասնագետներ կլինենք, և երեխաներն ավելի շատ բովանդակություն կսովորեն: Մենք պետք է կարողանանք ընտրել, թե որ գործիքներն ենք օգտագործելու, ինչի համար և ինչ նպատակով, քանի որ բոլորը հավասարապես արդյունավետ և արդյունավետ չեն լինի մեր ուսանողների համար որոշակի բովանդակություն հասկանալու համար: Շատ կարևոր է ընտրել այնպիսի գործիքներ,որոնք և՛ հետաքրքիռ են, և՛ ուսուցողական, որոնք պարզ են, շատ բարդ չեն, որոնց կիրառումը մատչելի կլինի բոլոր սովորողների համար: **ՏՀՏ Kahoot գործիքը անգլերեն դասավանդելը դարձնում է ավելի հետաքրքիր և արդիական:** Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում: Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է լինեն միասին նույն սենյակում և այս ձևաչափով գնահատման կիրառման ժամանակ անհրաժեշտ է համակարգչին միացված պրոեկտոր և պրոեկցիոն էկրան:Սովորողները հարցադրումներին հետևելու են էկրանից, իսկ պատասխանները նշելու են տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս,համակարգիչ,պլանշետ)օգնությ

	ամբ:Հարցման ավարտին հնարավոր է MS Exel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային գնահատականները:Այս տիրույթում աշխատելիս գնահատվում է սոբորողների կատարած առաջադրանքների և՞ արագությունը և ճշտությունը: Այս տիրույթում վարժություններ ստեղծելիս հնարավոր է կազմել հարցադրումներ բազմակի ընտրանք ձևաչափով: Kahoot առցանց գործիքը հնարավորություն է տալիս հետևյալ իրականացնել աշխատանքները. միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված վարժություններ պատրաստի վարժությունները խմբագրել . պահպանել առցանց հետևել սովորողների առաջադիմությանն առցանց և անմիջապես հարցման ժամանակ հարցերի մեջ տեղադրել նկարներ, բանաձևեր տարածել պատրաստի վարժությունները օգտագործել հավելվածը նաև Skype-ի և Google Hangouts-ի միջոցով հարցերն ընտրել ըստ բարդության աստիճանի

	հարցերին ավելացնել նկարագրություն , նկար , տեսահոլովակ յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ հրապարակման համար ընտրել լեզուն և սահմանել հասանելիության աստիճանը: Kahoot առցանց գործիքի կիրառման արդյունքում կունենաք . առցանց թեմատիկ վաժություններ միավորային գնահատում իրականացնելու համար պատրաստի վարժություններն առցանց հղմամբ տարածելու հնարավորություն սովորողների առաջադիմության միավորային արդյունքների ներբեռնում և վերլուծություն: https://icttraining.armedu.am/mod/page/view.php?id=10652 **Հետազոտական աշխատանք** Դասն անցկացվեց 5-րդ^{բ} դասարանում, որտեղ սովորում են 23 աշակերտ՝ 10 աղջիկ,13 տղա: Քանի որ սովորողներին անհրաժեշտ էր հասանելիություն համացանցին և ոչ բոլոր սովորողներն ունեին այդ հնարավորությունը, նախապես դասարանը բաժանվեց 3 խմբերի: Յուրաքանչյուր թիմ խաղին միացավ իր անունով՝ Խատուտիկներ, Արևներ,Աստղիկներ:

	Հաղթեց Աստղիկներ թիմը և՛ արագությամբ, և՛ պատասխանների ճշտությամբ: Սովորողները շատ արագ էին կողմնորոշվում, խաղում էին մեծ սիրով և հետաքրքրությամբ: Դասի վերջում նրանց տրվեց հարցաթերթիկ՝ ստուգելու ընտրված մեթոդի արդյունավետությունը, հասկանալու նրա դրական և բացասական կողմերը: Դասին ներկա էին դպրոցի տնօրենի ուսումնական գծով տեղակալը և լեզուների մեթոդմիավորման նախագահը: Դասին ինտեգրված էր ամբողջ դասարանը: Քանի քր սովորողները արդեն նախապես տեղյակ էին դասի անցկացման ֆորմատին, արել էին ամեն հնարավոր բան դասին պատրաստ ներկայանալու համար: Նմանատիպ դաս կանցկացվի նաև 4-րդ դասարանում սովորողների հետ:

Օգտագործված մեթոդները, գործիքները	Ֆոկուսային խմբեր: ՏՀՏ գործիքներ՝ հեռախոսներ,համակարգիչ :
Իրականացման ժամանակահատվածը	14.0 9.20 22
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	5-րդ դասարան՝10տղա,13 աղջիկ: 3 խումբ

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Դասը շատ հետաքրքիռ էր: Սովորողները շատ տպավորված էին:Ողջունելի էր սովորողների համախմբվածությունն ու ոգևորվածությունը: Կարծիքներ հայտնեցին նաև դպրոցի տնօրենի ուսումնական գծով տողակալը և լեզուների մեթոդմիավորման նախագահը: Նրանք նծեցին, որ նմանատիպ ինտերակտիվ դասերը խթանում են սովորողների գիտելիքների զառգացմանն ու թվային և մեդիա կարողունակության զարգացմանը, ինչն այսօր խիստ պահանջված ու արդիական է: Եղան առաջարկներ Խմբակայինից անցնել անհատան աշխատանքի Հարցերը շատացնել Երկարացնել հարցին պատասխանելու հնարավորության ժամանակահատվածը (նախատեսված էր 20 վրկ.) Ամփոփելով սովորողների հարցաթերթիկների պատասխանները՝ պարզ դարձավ, որ սովորողները շատ էին հավանել դասավանդման այս եղանակը, մոտ 70%-ը ավելի հեշտ էր համարել այս մեթոդը:20 %-ը մտածում էր, որ անգլերենով դժվար էր արագ հարցը հասկանալ:10%-ը կարծում էր,որ հարցերը բարդ էին:

Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. https://icttraining.armedu.am/course/view.php?id=166#section-4
2. https://kahoot.com/

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	Հավելված 1 Հարցաթերթիկ 1. Քեզ դուր եկա՞վ դասը: այո ոչ 2. Կցանկանայի՞ր նորից նմանատիպ դաս ունենալ: այո ոչ 3. Այսօրվա դասը ..... բարդ էր հեշտ էր 4. Քեզ ի՞նչն ամենաշատը դուր եկավ: _____ _____ 5. Առաջարկություններ _____ _____ Հավելված 2 https://create.kahoot.it/share/adjective/cae60381-748c-4106-b51b-3e8d5973e397